

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2014թ-ի դեկտեմբերի 27 –ին ժամը 13:00 –ին Արարատի մարզի Վ. Դվին

համայնքում տեղի ունեցավ 2014 թ-ի երկրորդ կիսամյակի վերաբերյալ հանրային լսում , որը վարում եր համայնքի ղեկավար՝ Լյուդմիլա Պետրովան , արձանագրում եր աշխատակազմի քարտուղար՝ Ս. Տամրազովան:

Լսումներին մասնակցում էին գյուղապետարանի աշխատակազմը, բուժ. ամբուլատորիայի աշխատակիցները,ավագանին և բնակչությունը:

Լսեցին համայնքում կատարված հետևյալ աշխատանքների մասին:

■ Հիմք ընդունելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը և բյուջեի հնարավորությունները , ինչպես նաև ելնելով բնակչության սոցիալ – կենցաղային վիճակի բարելավումից ու պահանջից համայնքի բյուջեի միջոցներով գազաֆիկացվել է Պրոֆեսոր Սիմոնյանի, Իսահակայնի , Մարագուլովի և Դոստոնսկու փողոցները , ընդամենը - 1.6 կմ. ծախսելով 12949.8 մլն. դրամ :

■ Համայնքի տարածական զարգացման, հողերի արդյունավետ և ռացիոնալ օգտագործման նպատակով ձեռք է բերվել համայնքի գլխավոր պարզեցրած հատակագիծը, համայնքի ֆոնդային բյուջեից ծախսելով ընդամենը 6 մլն. դրամ:

■ Համայնքում կազմակերպված կատարվել է աղբահանությունը:

■ Բնակիչների խնդրանքով գյուղ. մասնագետի կողմից կատարվել է հողամասերի չափագրում:

■ Սոցիալապես անապահով 154 ընտանիքներին տրամադրվել է ֆինանսական

աջակցություն:

■ Բնակչությանը տրամադրվել է 137 տողեկանք:

■ Դրամական օգնություն է ցուցաբերվել սոցիալապես անապահով ընտանիքներին 1815.0 հազար դրամի չափով :

■ Մահվան կապակցությամբ հանգուցյալների ընտանիքներին դրամական օգնություն է ցուցաբերվել 300.0 հազար դրամի չափով:

■ Հողի հարկ է հավազագրվել 6246,9 հ. դրամ :

■ Գույքահարկ է հավազագրվել 1232.2 հ. դրամ :

■ Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ առաջին դասարանի երեխաներին գյուղապետարանի կողմից տրամադրվել են պայուսակներ և զբեռնական պիտույքներ:

- Սուրբ Ծննդյան և Ամանորի տոների կապակցությամբ գյուղապետարանի կողմից համայնքի նորապսակներին և ուսանողներին տրամադրվել են նվերներ:
- Տարական դասարանների երեխաների համար կազմակերպվել է Ամանորյա միջոցառում և տրամադրվել են նվերներ:
- Ամանորի և սուրբ ծննդյան տոների առթիվ համայնքի սոցիալապես անապահով, հաշմանդամ, բազմազավակ և ծնողագուրկ երեխաների ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն:



Լ Պետրովա